

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հետեւեալ հետաքրքրաշարժ կռա
պաշտից պաշտամունքները , սովորու-
թիւնները , արարողաւթիւնները , ձե-
ւերը , հանդէսները , Գերոպատիւ-
ներակա վարդապետի եւ Պրուտացի
Արքիս ստրկաւագի ՚ի Հնդուստն ՚որ-
էիրակութեան օրագրութենէն , Ար-
ժանապատիւ Խորէն վարդապետն իւր
պարագ ժամանակի մէջ հաւաքելով
Հանգեսիս միջոցաւ կը հրատարակուի
՚ի գիտութիւն հետաքրքիր Ազգայնոց :

ՀնԴՍՏԱՆԻ կռապաշտները բնու-
թեամբ հեղեն և շատ երկշու , հաւ-
անգամ չեն կրնար կորել վասն զի ա-
րիւնէն շատ կը վախճան , միս և հազ
չեն ուտեր , մինակ ձուկը , եւ այն չէ
թէ ամեն աւատկ ձգունք :

Մրգելէն կուտեն : Գանգէս գետի
ջուրէն ՚ի զստ ուրիշ ջուր չեն խներ :

Գանգէս գետի ջուրը նոցա հա-
մար սուրբ է . անար համար երբ կուռ
պաշտից ջրիիրները Գանգէսէն ջուր կը
տանին , բնոււ ջուրի ամանը գետին չեն
գներ հանգչելու համար , մինչեւ որ ի-
րենց աելլը համենին :

Կռապաշտները իրենց մեռեները
կցրեն , հարուստները անուշահոտ
փայտերով , աղքատները քիչ մը խան-
ձելով Գանգէս գետը կը նետեն :

Հասարակ մեռեները հասարակ
փայտով կացրեն :

Կռապաշտները մեծաւ մասամբ
հարուստ են և աղքատասէր , սակայն
քաղաքի մէջ զլիի բաց և մերկ կը
աջն , մինակ իրենց առակաները ծած-
կելու համար մէկ մէկ սփածանիլիներ
կառանուն , ունակը հասարակ և ունակը
բեհեղոյ և սոկեթել :

Խոցա կանայք իրենց ոսքը ոսկի և
կամ արծաթ ապարանջան կը կրենացու-

պէս ալ բազուկները , գինոք յականէն ,
ող ՚ի բիթո , պարանոցներէն սակի շրջ-
թայ և կամ մարգարիտ կը կախէն , մա-
տանի և ոյլ զարդեր ունին , սակայն
բոկոսն կը շրջին :

Կռապաշտները թէ աղք եւ թէ
կանայք , (բայ ՚ի երախաններէն) ընկե-
րութեամբ ուղան նստիլ և կերակուր
ուտել չեն գիտեր , ամեն ոք կը պար-
տաւորի իրեն համար կերակուր պատ-
րաստել և առանձինն ուտել Միմեանց
կերակուրին բնաւ ձեռք չի պիտի զար-
նին , եթէ գիտուածով և կամ անզգու-
շութեամբ մէկը ձեռք երկնցունէ , ան-
միջապէս այն կերակուրները գուրա
թափելու է :

Կռապաշտները մեծ մասամբ ա-
ռանց իւղի եկած բրինձ և ոսք տեղ
քարի փոյց ճմկելով իրարու հետ խառ-
նելով կուտեն :

Պրմոց աղքը որ կռապաշտից մէկ
տեսակն է , չնուռոր կենդանի շուտեր .
կը կասկածի թէ մի գուցէ իւր ծնողաց
և կամ մերձակայից և ազգականոց ոգին
նոցա մէջ եղած լինի : Այս աղքը հո-
գեփոխութիւն կը լնդունի :

Ասոնք ստակեալ կենդանիները
խորտիկ խորովածու կը շննեն կուտեն :

Այս աղքը սովորութիւն ունի տա-
րին մէկ օր արմուներէն բաժին տալ
իւր քուրմերուն , և այս բաժինը պէտք
է որ հազար լինի , եթէ մրգելուն է ,
հազար հատ սփափ լինի , եթէ ուրիշ
ոյլ լինէ որ լինի գարձեալ հազար թիւ-
ամբ պէս պիտի լինի : Եթէ մէկն չկարո-
զանայ հազար թիւր տալ , պէտք է որ
քանիմ ընտանեաց հետ միանայ , ամենք
մէկն գարձեալ հազար թիւր տան :

Այս տուրք մինակ կռոց և քուր-
մերուն տալ ստիպումը չի այս անանց
և թռչոց եւս կուտան , բայց որուն որ
տան , անար երկրպագութիւն ընել ան-
հրաժեշտ է :

Նաև սովորութիւն ունին տարին մի օր Բունկիներուն մէկին սենեակ գնալը , և միւս Բունկիները հոն հաւաքել , ուր մեծ Բունկին այսինքն քրմագետը բարձր տեղ մը բազմելով , ժողովուրդը անոր առջեւը իյնալով երկրագութիւն կ'ընէ , և ձեռնամած ի գուման նստած , աղօմք և խնդրուածները կ'ընեն քուրմէն , յետոյ փողերը և թմբուկները հնչցունելով կը զարնեն և կը խաղան :

Ասոնք գրեթէ միշտ յարգանօք կը վարուին իրենց Բունկիներու հետ և զայն տեսած ժամանակիւրաքանչիւր զվասկօր աչք ի խոնրհ նայելով երեք անգամ ի դումս անկեալ պիտի ըսէ . « Տէր գրեթառատ , ողորմեամ ինձ ու յետոյ երկրագութիւն ընելով պիտի սկսի խօսիլ , ինչ որ պէտք է , և ինչու համար որ գնացած է :

Սակայն քաղաքի շուկաներուն մէջ երբ յարաբերութիւն մը չունին , անտարբեր են :

Պրմիները ազատ են , որ կրօնի որ ուղեն կրնան հապատակիլ , և զայլս քարոզել ըատ ամենայնի ազատութիւն է : Մինակ թէ կուռքերը չնախատեն եւ չանարդուին : Եթէ մէկը յանդգնի նախատելու ի մահ կը դատապարտեն :

Հնդիկները երբ ուղեն կարող են իրենց կրօնքը փոխել , բայց հայրենի ժառանգութենէն զրկուած կը համարուին ըստ տեղական օրինի :

Պրմիները գլուխ բաց կը շրջին , ու մանք թաշկինակ մը կը կապեն , երկայն և գեղեցիկ մազեր ունին , թէ այր և թէ կին , այր մարդիկ թէ և մազ չունին , երեսնին իսպառ գերծել կուտան . ուստի շատ ժամանակ կին մարդիկներէն չեն որոշուիր :

Բնատուչը կապաշտները մինակ գագաթին վրայ ծամ թող կուտան և ճակատնին երեք գիծ կը գծեն , որոց

երկուքը ուղղակի և սպիտակ , խակ միւ ջինը՝ գեղին և կամ կարմիր , և կամ լսաքմաց այլ և այլ գոյներով կը ներկուին :

Ռանգնայ քաղաքի Պրմի կուապաշտները ուրիշ քաղաքներէն աւելի սովորութիւն մը ունին , այն է , առ հասարակ արք սորքէն սկսեալ մինչեւ ցպօրտիրենց կուոց նուիրելի ծաղիկներով կը ծածկուին . նոյն իսկ կուռքերու և ամեն պաշտածներուն պատկերներն ծեծել կուտան իրենց մարմնոյ վրայ բնաւ աեղ մը բաց չը ձգելով :

Եւ անոնք որ չեն ուղեր ծեծել տալայս պատկերները , նոքա կը նախատուին :

Այս աղդի համար ձերմակ հովանոց առնիլը արգելեալ է , վասն զի ձերմակ հովանոցը մինակ կուռքերուն և թագաւորին կրնայ նուիրուիլ և ոչ ուրիշ որ և իցէ անձի :

Պրմիները երբ իրենց թագաւորին ներկայանան , նախ ներկայացողն պիտի երթայ նստի , զի ամենեւին սորքի վրայ չի պիտի ելլեն , մինչեւ որ նախ թագաւորն ելլէ երթայ , յետոյ ներկայացեալ :

Պրմաց թագաւորութեան իշխանութեան տակը ուժը միլիոն Պրմի ժողովուրդ կը հաշուուի իսկ մնացեալ Պրմիները Անգլիացւոց իշխանութեան տակն են :

Պրմաց թագաւորն իւր տուած հրամանագիրներու գլուխն այսպէս կը գրէ . « Ես արքայ ոսկէ պալատի , ոսկի գահու , սպիտակ փղի , սպիտակ հովանոցի , գեղեցիկ պարտիղի , երկուասան գրամք աղիւսացէն մեծի բերդի , և բոլոր Պրմատանու եւ նորին սահմանաց հրամայեմ և այլն :

Հնդիկները սովորութիւն ունին վեց տարիէն մինչեւ ուժ տարեկան լինին ամուսնանալ , ամուսնանալէն զինի , եթէ կինը մեռնի , այրն տղատէ

ուրիշի մը հետ ամսւանալ, սակայն կինը, ազատ չէ, եթէ երեք աւուր ամուսնացած ալ լինի, չի կրնար ամսւանանալ, այլ ամուրի կեանք վարի պէտք է, յետ այնորիկ եւ զիսի մազերը կը գիրծէ ՚ի նշան սգւոյ :

Պրմաց մէջ այր մարդ ազատ է առնել այնքան կին, որքան կարող է պահել, մանաւանդ թագաւորը շափազանց կին ունի :

Եթէ բազմակին Պրմինը մասնկաւ նայ, կրնայ իւր առաջին կինը արձակել զայն արձակելին զինի, իրաւունք կունենայ իւր երկրորդ, երրորդ, չորրորդ և այլն կանացքն վաճառել :

Թէ՛ Անգղեացիք այս օրէնքն ջնջելու կը ջանան գոնէ իրենց իշխան քաղաքներէն :

ՊՐՄԱՅ ՆՆԾԵՑԵԼՅ ՅՆ-ՂԱՐԴԻՐ-ՂԻ-ՆՆ :

Պրմիները ննծեցեալը դագաղի մէջ բրած, և դագաղը լծակէ մը կախուած, երկու այր իրենց ուսերուն վրայ առած կը տանին, երբեմն կառքով ալ կը տանին : Մեռելի առաջին չորս կանացք չորս թագախով մըրգեղին կը առնին՝ թռչնաց տալու :

Յուղարկաւորութիւնը փոխանակ տրամութեամ ուրախ և զուարթ կը կատարէն : Փողերով, թմբուկներով, խուռն բազմութեամբ կ'որթան դագղին ետեւէն :

Եւ աւհասարակ ձերմակեղին կը հագնին, և ձեռքերնին մի մի խոշոր միկար առած ծիսելով կ'երթան : Երիկ մարդերէն աւելի կանայք կ'երթան, բայց բնաւ լսլ չիկայ, ննծեցեալը երբեմն վանք տանելով կ'օրհնեն, և երբեմն վանք չեն տանիր, այլ այրելին եւ երբեմն թաղէլին վերջ բունկին ննծեցելցն տունը երթալով կ'օրհնէ, և զանոնք կը միտթարէ :

Հնդիկի կռապ շտները լուսնոյ ըրունած ժամանակ կը սկսին ծնծաղներ զարնել, հրացաներ արձակել եւ աղաղակներով տանէ ՚ի տուն շրջելով թրինձ, սիսեռ, և այլն կը մուրան, որպէս զի տանեն Գանգէս գետոյն նուիրեն, ՚ի շնորհակալութիւն, որ ողբարձով իրենց զուսին բռնող բանաւորն հալածելով տպատեց նորա ձեռքէն :

Խունայ այս խաւարումէն յետոյ սոցա քուրմ պրահմիները կը բաժնիւին իրենց ժողովրդոց տաները և ութօր ժողովրդին կերակուրները իրենք կերին, իններորդ օրը մեծ պարգեւ առնելով կը մեկնին, Այն ութ աւտուր միջոցին տան տէրն խապառ արգիլուած է խոհանոց մանելէ ։ բաց ՚ի բրահմինէն ոչ պէ կարող է խոհանոց մանել :

Մանաւանդ առաջին օրը տան տէրն պէտք է որ Գանգէս գետէն տիղմ բերել տայ և խոհանոցը ծեփէ տիղմով այսպէս ալ խոհանոցի ամսները բոլորն ալ նորոգելու է, որպէս զի պրահմինը նոր խոհանոցի և նոր ամսներու մէջ կերակուր եփէ :

Այս ժողովուրդը կով ալ կը պաշտէ ինչպէս որ շատ նիւթեր ալ կը պաշտէ, խոտելի դրութիւն ալ ունին որ կովու միզով կը լուացուին, երեսնին և բերանին միզով կը ցողին . եւ մարմիննին կ'օծանեն նովու : Այսպէս ալ իրենց տաները և անօթները կը լուանան և կ'օծանեն նուիրեալ կովու միզով :

Սոյն պաշտելի կովիրը անարգել կերպով բաց գասած և ուղած տեղերնին կը մանեն կելլեն : Եւ ինչ ուտելիք որ գտնեն կուտեն, մէկն շարգիլեր զիւրնք :

Պոմպէի մէջ կրակապաշտ և արեւապաշտ Պարսիկներ եւս կան : Կը բակապաշտները, իրենց ննծեցեալները չեն թաղիր, և ոչ ալ կ'այրեն . այլ յատուկ տեղ ունին, ուր ննծեցեալը

գնելով թուղարք կուգան անոր ամբողջ միար կ'ուտեն , յետ այնորիկ մեռելցն տէրը կ'ուգայ սակոները կը ժողովէ և կը տանի սակերաց համար յատուկ սահմանեալ տեղը կը պահէ :

Այս ցեղն ալ բազմակին է :

Կովապատշտները , երբ իրենց պաշտած կով կը մեռնի , պատուաւոր կերպով և մեծ հանդիսիւ կը տանեն կը թաղեն : Եւ նորա հորթը պաշտելին տեղը յաջորդեցունելով կըսկսին զայն պաշտել :

Պրմաց Բունկիները և Բնկուհիները այսինքն քուրմերը և քրմուհիները , ամենեւին չեն ամուսնանար , և եթէ ամուսնացեալ կանայք ուղեն բնկուհիներու կարգ մոնել , նախ պէտք է որ իրենց այրը ձգեն , և զգեստնին փոխեն և գլուխնին գերծեն : (Այս պարագայիս մէջ , այրն ամենեւին կարող չէ կնոջ վրայ բռնանալ և արգելուլ) Զգեստ փոխնելին վերջ կ'երթայ նոցաշարքը կըդգասուի , որքան որ կամի , և ուղած ժամանակը ազատ է գարձեալ զգեստ փոխնելով դուրս ելլել և աշխարհական կարգի մէջ մոնել : Այսպէս ալ բնկուհին թողած այրը ազատ է ուրիշ կնոջ հետ ամուսնանար :

Բունկիները և Բնկուհիները շատ խստակրօն են և անոնցմէ խստիւ պարկեցած վարք կը պահանջուի , և ամուրի կենօք կ'ապրին կարի զգուշութեամբ : Երբ նոցա մէկին վրայ անբարյականութեան կասկած լինի մինչեւ ՚ի մահ դատապարտելու պատիժ կայ , վասն զի ազատէ ուղած ժամանակ թողուլ ամուրի կեանք և ամուսնանար , ամենեւին ոչ արգելք ունի և ոչ նախատինք , Որքան ուղէ կրնայ իւր կեանքը փոխնել Սոքա ամեն ութօր անգամ գլուխնին կը գերծեն : Եւ դուրս ելլելու շրելու արտօնութիւն չունին , մոնաւանդ փոքր օրիորդ բնկուհիները : Այսպէս

ալ խոկ իրենց բնակած մեհենի մէջ ամեն մարդու չեն երեւիր :

Բնկուհիները ձեռքերնին դրամ չեն առներ , վասն զի ծանր մեղք համարուած է ձեռքը դրամ առնելլը , միայն թէ իրենց վրայ առած ափածանելիի ետեւի կողմէն դրապան մը ունին , նըւէր տուողը հոն կը ձգէ , և կամ թէ տակաւին նոցա կարգին չը մոտած փոքր աշակերտները կընդունին զայն նուերները :

Բունկիներու վանքի մէջ յատուկ կերակուր չի պատրաստուիր , այլ նոցա աշոկերտները՝ ամանը լծակէ մը կախած տունէ ՚ի տուն կը շրջին իւրաքանչիւր տուն իւր կերակուրներու առաջին անդրանիկ դգալը նոցա կը նուիրեն , յետոյ իրենք իրենց կերակուրը կ'ուտեն :

Երբ ծնողք իրենց զաւակները կուզեն կուատան նուիրեն , շրոս օր մեծ ուրախութեան հանգէս և խնձոյք կը կատարեն , իրենց ազգականները և բարեկամները հաւաքելով , և նուիրեալն շքեղ կառապի մը մէջ բազմեցուցանելով քաղաքի մէջ հանդիսիւ կը շրջեցուցանեն ՚ի տես ժողովրդեան :

Պրահմիներու ժառանգները երբէք ուղղութեան օրէնքով փաստավ , ու ապացոյցով չեն հրահանգիր ՚ի կրօնա , այլ յնորքներով և ոնտոի յցոսերով , կցը տգիսութեան մէջ պահել շատ կը սիրեն : Յատուկ ուստումնարաններ վարժարաններ չունին , այլ միայն կուատան մեծ կուսուցանեն մեծ մասամբ իրենց կրօնքներէ խորչելը : Զի կ'ըսէն ամեն կրօնքներ սուտ են եւ մոլորութիւն . արտաքին գիտութիւններէ ալ կ'ուզեն հեռի մնալ : Պրմութեան համար պատրաստուածները կը վարժեցնեն մուրացկանութեամբ ապրելու եղանակներու մէջ , բերանին եփած բրինձ

նետելով մաւրդի կանութեամբ կը շրջնին ,
տունէ ՚ի տուն մէկ մէկ քսակ վիզերնին
կախած և ձեռքերնին մէկ մէկ փող ,
երբ դրամը ստանան փողերնին կը հըն-
չն : Կռապաշները սովորութիւն ու-
նին ամեն տուաւօտ իւղով օծուիլ և
արշալուսին շուտ ՚ի Գանգէս գետը
կ'երժան լուացուիլ և տեակ տեսակ
մրգեղէննը և գոյն դգոյն անուշահոս
ծաղիկներ ձկան ձեւ թէփափի մէջ
գնելով հետերնին կը տանեն Գան-
գէսին նուիրելու :

Երբ գետի եղերը կը հասնին , ան-
խըտիր ամեն կողմ՝ գետին իշխալով ե-
րեսի վրայ երկար ժամանակ մնալէն յե-
տոյ կելեն գետի եղերը ջուր կը մըտ-
նեն , և մատով ջուր առնելով ճակատ-
նին կը քսեն , յետոյ աչքը , ականջը ,
գագամին և այլն , եւ ազօթելով կը
լողանան : Զուրէն ելլելէն զինի դար-
ձեալ ետեւի վրայ ինկած երկրպագու-
թիւն կ'ընեն , և կը թաւալին հողե-
րուն վրայ : Յետոյ գետէն ջուր առ-
նելով հետերնին կը տանեն :

Ամեն երեկոյ ՚ի պատիւ Գանգէս
գետին Ճրագները կը վառեն գետի ե-
ղերը : Նցն աւելի ըատ մը կուա-
պաշտ ճկնաւոր ուխտաւորներ կան ,
բայց Ճրագարաներու տեղերը ելլերու
իրաւունք չունին , որ բարձր աւել մի
է և գլուխը երկաթ :

Այն կրօնաւորները որ նուիրեալ կը
համարուին , ՚ի խորդ և ՚ի մսիսիր նըս-
տած ցորէկ արեւակէղ կը լինին , անձ-
րեւներու տակը , գիշերը զով ցողի
տակ կը հանգստանան , թէեւ հովա-
նոցներ ունին , բայց ոչ արեւի տա-
քութեան եւ ոչ անձեւաց օգուտ
ունի : Սոքա շարունակ աղօթքի կը պա-
րապին և մերկ են , միայն իրենց ա-
ռատիսնքը կը ծածկէն :

Հեռի երկիրներէն կռապաշները
բոկոտն երեք ամիս քաղելով սցն գե-

տին ուխտի կու գան : Թէպէտ այս ո-
տարներու համար փոքր խուղեր շի-
նած են , որոց մէջ կը պատապարուին
և յետ դառնալոյն գետի ջրէն կը տա-
նին հետերնին առանց գետին դնելու ,
միայն թէ քնացած ժամանակը եռո-
տանիի վրայ անօթ մը ունին հաստա-
տած , անոր մէջ կը դնեն ջուրը երկրէն
բարձր :

Այս ջուրը երբ իրենց երկիրը կը
հասցունեն իրենց լուացուելի ջուրի
մէջ մէկ մէկ կաթիւ կը կաթեցունեն ,
և անով կ'օծուին :

Կռապաշները ՚ի պատիւ Նօյի կր-
ոյն տօն կը կատարեն , կարմիր գոյնով
կը ներկուին և կը սկսին պարել մինչեւ
երեկոյ , արեւ մտնելին վերջ կը սկսին
իրարու վրայ ջուր սրսկիւ , և ծաղրու-
ծութեամբ դռներէն պատռհաներէն
անցնող դարձող կռապաշտ ժողովը
գոյ վրայ աղբիւս կը ցանեն , այս տօնի
օրը գրեթէ ամենքը մովարով ծածկը-
ւած կը տեսնեուին :

Ոմանիք ալ դիմակներով և գոյնգոյն
ներկերով խացուարդէտ կը ներկուին ,
և թաղէ ՚ի թաղ անլսելի հայհցու-
թեամբ կը շրջնին :

Իսպառ ազատ են իրենց ուղածն
ընելու սոյն հանգիսի օրը , մինակ թէ
օտար ազգաց վեսա չի պիտի տան , և
իրենիք իրենց մէջ կուր չի պիտի յա-
րուցանեն : Կռապավարութիւնը միայն
այս չափին կը հսկէ :

Մանաւելոյ թագաւորանիսաւ քաղա-
քի մէջ Փութի կուռքին յանկարծական
առաւանմը կը պատրաստեն հետեւեալ
և զանակաւ :

Թագաւորի քոյրը արեւելեան թա-
գաւհի կ'անուանի , իսկ իւր առաջի
կիներէն երեքն արեւմուան , հիւսիսա-
մին և հարաւային թագուհիներ կը
համարուին :

Սցն չորս թագուհիները թագաւ-

ւորի պալատին մէջ Երկու ժամու մէջ բամբակի հունգ ցանելով, դարձանելով, հասցունելով, բազելով զաելով գվեռով մանելով հիւսելով և իրարութով բերել կարելով իրենց մեծ կուռքին կը նուիրեն :

Այս գործողութեան մէջ նշանակութեան արժանի է այդ կանանց կեղծ ճարպիկութիւնը, որը այն տեսակ շարժումներ ունին, կը կարծուի թէ խակ իրօք բան մը կ'ընեն : Եւ թագաւորը բարձր տեղ մը նստած հանդիսատէս կը լինի : Երբ սոյն կանայք այս գործողութեան մէջն են, յանկարծակի մարդ մը յառիւծ ձեւացեալ նորա մորթի տակ պահուած նոցա, այսինքն կանանց վրայ կը յարձակի, նորա ալ մի կողմէն իրենց գործը շարունակելով, միւս կողմէն առիւծը վարելով յիշեալ սաւանը կը տատրաստեն և կը ներկին ու բարձր ձողի մի ծայր կապելով երեք թագուհիները իրենց օգնականներով մէկ տեղ զայն թագաւորին կը նուիրեն, և թագաւորն ալ իւր քոյր արեւելեան մեծ թագուհոյն կը նուիրէ, որուն վրայ ջուր սրսկելով հասարակութեան կը յանձնեն : Նորա եւս մեծ հանդիսիւ կը տանեն իրենց մեծ աստուծոյն կը նուիրեն : Եւ իրենց ջերմ շնորհակալութիւնը կը յայսնեն, որքից ժամանակի մէջ այսպիսի բարիք մը հրաշագործեց թագուհիներու ձեռօք :

Հեղիները Ռասրուծայ ըստուած ու կոցն հարսանիք կը կաարեն մեծ հանդիսիւ, թափօր կազմելով յաջմէն և յահնէի ։ Զահընկուները երեանի շափ համբ քալելով, և ոսցա ետեւէն բագնին նուիրեալ գրոշակները եւ առնց մէջ ոսկէ սանձիւ պալարակադ պլճնեալ և հիանալի զարդերով զարդարուած շրոս երիվարիներ և առնց եւտեւէն կը քալեն երկու կողմէն շրոս հարիւրի չափ մամականեր, աստեղ

մէջ տեղին Անդ զիացւոց երաժշտական զօրքն փողերով և թմբուկներով և ոցա ետեւէն պատգարակի մէջ կուռք մը բազմած բազմապահոյք Ճուխութեամբ զանազան զարդերով զարդարուած և չորս սիւներու վրաց հաստատուած հօվանոց մը որ հովանի կը պահէ, և անոր բալորակիքը շուրջ պատած են լապտերներ և ջահեր որք Հնդկաց աստուածն կը լուսաւորէն : Եւ հովանամարները երկու կողմէն մոծակները կը հալածէն, որ չհարուածէն իրենց աստուածը : Եւ անուշահու ծխանելիները կը ծխն բուրումն յանուշահութիւնն : Եւ անհամար Հնդկաց բազմութիւնը եւ քուրմերը առաջն և ետեւէն ուրախութեամբ երթարով կը շրջն թագէ իթաղ ի կատարումն անզգայ կուռքի երեւեկայական հարսանեաց :

Կոսոյ ԳետընիԵցունիւնը :

Կալկաթայու Հնդիկ կռապաշանելի ուղղութիւն ունին տաղին անգամ մը իրենց քարեղէն փայտեղէն և կաւեղէն շաստուածները Գանդէս գետը ձգեւ :

Այս ժողովսւրդը այլ և այլ նիւթեղէն կուռքեր շնորհալ իրենց տան մէջ պահնելով կը պաշտեն եւ անոնց առջեւը իյնալով երկրպագութիւն կը նեն եւ զանազան զարդերով զանոնք զարդարելով անուշահու խնկելիներ կը ծխն եւ ճրագներ կը վառեն անոնց հայրուածներ եւ բարեմաղթութիւնները կ'ընեն : Եատ երկիւղածութեամբ և ակնածութեամբ կը մօտենան անոնց, և իրենց գործերուն յաջողութիւն կը խնդրեն, մինչև տարեգլույն :

Երբ տարեգլուխ կուգայ, այն կուռքերը աւելի զարդարելով, մեծ

Հանդէսներով փողերով եւ թմբուկներով մեծամեծ ուրախութիւններով քաղաքի փողոցներու և հրապարակներու մէջ կը քընդգունեն, յետոյ Դանդէս գետի եզերքը տանելով սասափկ կերպով կ'անարգեն և կ'անպատճեն ու անոնց երեսը կը թքանեն կը նախատեն և կը հեգնեն աքացի և բռնցի կը ծեծեն թէ ինչո՞ւ մեր ամեն հայցուածները չը տուիր, մեր խնդիրները չը կատարեցիր, ուրեմն արժանի ես գետակուր լինելոց, ըսելով գետն կը նետեն, և յետ դառնալով նորէն շուկայէն ուրիշ կուռքեր գնելով իրենց տուները կը տանին պոշտելու համար։ Եւ ամեն տան մէջ անպատճառ պէտք է որ կուռք գտնուի։

Այս պատկաւ կը պատկեն կռատանց մէջ կուռքերը եւս։

Իսկ այն կուռքերը ոքք հարուստ են կամ ոսկի և արծաթէ և այլն թանկագին նիւթերէ շինուած են և կամ՝ նորօք զարդարուած, անոնք եւս մի և նոյն կերպով կը տանին, և ամեն արարողութիւն եւ նախատինք կուտան, բայց գետը չեն ձգեր, այլ նաւակի մէջ գնելով գետի միջասահմանը տանելով, կ'ըսեն իրեն, մեր խընդիրները չի կատարելուդ համար արժանի էիր այն ամեն նախատանաց որովք նախատուեցար։ Բայց որովհետեւ մեր նախատինքները համբերութեամբ տարար, մեզ չը բարկացար և զմեզ չը պատմեցիր, ուրեմն մէնք եւս զքեզ մաքրելով այս սուրբ ջրով (երեք ափ ջուր կը լեցունեն գլխոյն վրայ) և յետ դարձունելով դարձեալ (հանդիսւ և պատուով) մեզ ասուած կ'ընդունիմք զքեզ, միայն թէ յետ այսորիկ մեր հայցուածները եւ խնդիրները կատարե։ Այս եղանակու հարուստ կուռքերը յետ կը դարձնեն և կը պաշտեն։

(Նորունակէլ)

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ յանձնուած հետեւեալ նամակն յօժարութեամբ կը հրատարակենք, յուսալով որ մեր սիրելի Ազգայինք տպագրութեան բաժանորդ կը գրուին այնպիսի մի գրաւոր երկասիրութեան համար, որ, ըստ յայտարարութեան նամակին, անշուշու հարցասիրական պիտի լինի իւր պարունակութեամբ բնիկ հոցեցի վեպաց և անցից։

Ոուսաստանի Հայ վիարագրութիւններէն արդէն յայտնի են բանասիրաց անմահ Աբովիանի Վէրք ՀԱՅԱՍՏԱՆԻՆ, և Պ. Պռոշեանցի ՍՈՍՎԱՐԴԻ ԹԵՐՆ, նամակագիր Բարիսուդարեանցի աշխատասիրութիւնն երրորդն սիրտի լինի սոյն օրինակ հրատարակութեանց մէջ։

Մէք շատ ուրախ ենք, որ մեր գրագետներն մեր ժողովրդեան կեանքին կը մօտենան և այն հանքը կը հետախուզեն, որ արժանի է հետախուզութեան։ Մէք ազգային ժողովրդականութիւնն սիրելու համար՝ պէտք է որ մեր ժողովուրդն ճանաչենք իւր ամեն կատարելութեամբ և թերութեամբ։ Իսկ ժողովուրդն ճանաչելու համար՝ պէտք է որ ուսումնասիրենք նորակեանքն ու կենցաղն, նորա սովորութիւններն, նորա ուրախական և որումական հանդէսներն, նորա սիրոց և խանգից զեղմունքներն։ Մէրն, որ մի հզօր ազգեցութիւն ունի մարդկային կենաց վերայ եւ արտայայտութեան բիւրաւոր ձեւեր, արգեօք բնշուէս կ'արտայայտի հայեցի ընտանեկան կենաց մէջ, ծնողական և որդիսական պարտաւորութեանց մէջ, նշանախոսական և ամուսնական կամակցութեանց մէջ։ Հատ և շատ նահապետական սիրուն սովորութիւններ կան Հայաստանի շինական կենաց մէջ, որոնք իմաստակաւ-

Տանօթ են գրաւոր աշխարհին, եւ
որովք փսխանակ քաջալերութեամբ
պահպանուելու, որ աւուր կ'անհետին,
որով և ժողովրդային կենաց շուքն ու
վայելութիւնն կը վերանաց:

Մէր ժողովրդային կենդանութիւնն
կը պակսի և մէք բոլորովին անտարբեր
եմք: Ժողովրդային կենդանութիւնն
կը պակսի ոչ միայն ընտանեկան շրջա-
նին մէջ, այլ և իւր բնական մարմնու-
մարզիկ կրթութեանց մէջ: Զիավար-
ժութիւնն, որոնք պատանեկական կրր-
թութիւններ էին Հայաստանի շինական
կենաց մէջ, այժմ երիտասարդներուն
համար անգամ հրապար չունին: Առ-
ուաջ աներոջ ընտիր նուերն իւր առողգ
փեսացուին զէնքեր էին եւ նժցդ,
և փեսան իւր պատին զինի՝ անշուշտ
համօրէն փեսաւերաց առջեւ պէտք է
թագն՝ ՚ի գլուխ իւր օրսորդական ճար-
տարութիւնն ցոյց տար, հեռաւոր
նշանին զարնէր հրացանի գնտակաւ և
իւր ամուսնական թագաւորութեան
Կեցյէն լսէր բոլոր հանդիսականներէն,
իսկ այժմ այս առնացի կրթութիւնն-
երն սպառելու վերաց են և հազիւ-
ուրէր հետքերն կը նշմարուին:

Ուստի քաջալերութեան արժանի
են այն ժողովրդային վիպագիրներն,
որոնք Հայաստանի շինական կենաց
պատկերն պահպանելու համար՝ ՚ի գիր
կ'արձանացնեն զայն և ներկայ սերուն-
դին կը նուերեն, կենդանութեալ աշխայժ
արծործելու համար: Քաջալերութեան
արժանի է, հետեւապէս, և Բարիսու-
դարեանցն, որ իւր հետեւեալ նամաւ-
կաւ ազգայնոց օգնութեան կը դիմէ
իւր երկասիրութիւնն հրատարակելու
համար:

Ն Ա Մ Ա Կ

Հայրենասէր նովայր:

ԺԱՄԱՆԱԿՆ, որ իւր ամենածախ
ժանիքներով աշխարհիս մէջ գանուած
ազգ և ազինք ծախելով ոչչութեան
մէջ անցայտ արած է և տակաւին կ'ա-
նե, երբէք չը կարողացաւ և բնաւ չէ
կարող ծախել առաքինեաց և դիւցո-
ղանց արարքներն չէ կարող ջնջել նո-
ցայաւերժական յիշատակներն և իւ-
րեանց դիականց հետ ՚ի խորս գերեզ-
մանաց թաղել նոցաւ անմահ անուննե-
րըն: Քանզի ամենայն դարուց մէջ
գտնուած են հայրենասիրութեամբ
վառուած վեհ անձինք, որք առաքի-
նեաց եւ դիւցազանց անուններն եւ
քաջագործութիւններն ուկեղէն տա-
ռերով դրոշմէլ տուած են պատմու-
թեանց և վիպասանութեանց էջերու
մէջ, որք մինչեւ ցայսօր անցինց միա-
ցած են յաջորդ սերնդոց մէջ:

Ներկայ դարուս մէջ, Հայրենասէր
Ելլեայր, նոյն սուրբ նախանձու ազ-
գասիրութեան կրակն Զեր սրտի մէջ
եւս վառուած կը տեսնուի, որով
խնդրեցիք յինէն Խնածախցի Մերզա-
յի և Աննայի վիպական անցքերն գը-
րել, որք անտարակցու եմ, թէ անհա-
ճոյ պիտի չերեւին Հայ Հայրեննեաց
առանին կենցաղն սիրող ազգայնոց:

Կը խստովնիմ, որ Զեր այս խրն-
չիրն իմ կարողաւթիւնէս վերէր, բայց
առ Զեղ ունեցած եղբայրական սէրս
կը պարտաւորէր զիս չը խուսափիլ:
Քանզի Զեր այս նոդատակն յաւետ
ընդ հանուրի օգտին պէտք է ծառայէ,
որով կ'ուզէք անյելցն յիշատակն ան-
կորուատ պահպանել, ներկայիս Երի-
տասարդաց և օրիորդաց ամուսնական
ճշմարիտ սիրոյ օրինակ մի տալ և ա-
պագային զգուշութեան տիստար ըն-
ծայել: Վասն որոյ ահա Զեր ներողա-